,,ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 3 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ,,ՊՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
վ3-ՄԱՏԱՁԲ-2019/1

ք. վանաձոր 2, 07 .2019 թ.

,Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա,, ՊՓԲԸ-ն ի դեմս Ա. Եդոյան-ի, որը գործում <<Վանաձորի թիվ 3 պօլիկլինիկա>>ՊՓԲԸ ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Զօյլ>>ՍՊԸ, -ն, ի դեմս Արտակ Սահրադյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տրանսպորտային սարքավորումներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանաբ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝** նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հացեով

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հացեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հացեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հացեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հացեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, - լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն հրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է84400( ութսունչորս հազար չորս հարյուր )ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով արձանագրության ստորագրման պահից 30 բանկային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված5աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող

վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ապրանքի մատակարարման ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգտուները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| Գնորդ | Մատակարար |
|---|---|
| Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՊՓԲԸ | <<Ջոյլ>>ՍՊԸ |
| ք.Վանաձոր, Պ. Սևակի 49 | |
| <<ԱԿԲԱ>> Կրեդիտ Ագրիկոլ բանկ | բանկ |
| ՀՎՀՀ 06907229 | ՀՎՀՀ |
| Հ/Հ 220055140267000 | Հ/Հ |
| Տնօրեն Արտակ Եղոյան (ստորագրություն) | Տնօրեն Արտակ Սահրադյանի (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N1

Գնման առարկայի բնութագրեր

## Գնման Ժամանակացույց

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| նախատեսվածչափաբաժնիհամարըիրավել | գնումներիպլանովնախատեսվածցիկլըծ կոդը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքայիննշանը | արտադրողըևծագմաներ կիրը | տեխնիկականբնութագիրը | չափմանմիավորը | միավորգինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 34321121 | Ցուղի զտիչ | | Ցուղի զտիչ | հատ | 900 | 900 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 2 | 34321121 | Օդի զտիչ | | Օդի զտիչ | հատ | 1800 | 1800 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 3 | 34321121 | Բենզինի զտիչ | | Բենզինի զտիչ | հատ | 2000 | 2000 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 34321180 | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի) | | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի) Կոմպլեկտ(4 հատ | հատ | 3500 | 3500 | 1 | Վանաձոր Դ, Սնակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելուց 20օրից |
| 5 | 34321170 | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի ) | | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի ) Կոմպլեկտ(4 հատ | հատ | 2900 | 2900 | 1 | Վանաձոր Դ, Սնակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելուց 20օրից |
| 6 | 34321190 | Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ | | Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ 8հատ(կոմպլեկտ) | հատ | 2900 | 2900 | 1 | Վանաձոր Դ, Սնակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելուց 20օրից |
| 7 | 34321190 | Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչնիկ) զույգ | | Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչնիկ) զույգ | հատ | 2900 | 2900 | 1 | Վանաձոր Դ, Սնակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելուց 20օրից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 34321250 | Ղեկանիվի սյուներ ևտուփեր (ռուլեվոյ տյագա) կոմպ | | Ղեկանիվի սյուներ ևտուփեր (ռուլեվոյ տյագա) Կոմպլեկտ(N-3) | հատ | 13900 | 13900 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 9 | 34321250 | Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպլեկտ | | Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպլեկտ Կոմպլեկտ(N-4) | հատ | 9600 | 9600 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 10 | 34331300 | Տերմոստատ | | Տերմոստատ | հատ | 3500 | 3500 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 11 | 34331300 | Բենզանասոս | | Բենզանասոս | հատ | 5000 | 5000 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 12 | 34331300 | Մարտոկոց | | Մարտոկոց | հատ | 27000 | 27000 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 34311180 | Ջրի պոմպ | | Ջրի պոմպ | հատ | 5000 | 5000 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 14 | 34311140 | Շարժիչի ռեմեն | | Շարժիչի ռեմեն | հատ | 1000 | 1000 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |
| 15 | 34321130 | Ձեռքի արգելակման ճոպան | | Ձեռքի արգելակման ճոպան | հատ | 2500 | 2500 | 1 | Վանաձոր Պ, Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից |

Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20օրից եթե վաճառողը համաձայն է պայմանագիր կնքելու օրից;

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | ապրանքի | | | *Նախատեսվում է գնել 2019թ. բյուջետային միջոցների հաշվին ըստ եռամսյակների* | | *Ընդամենը* | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *Անվանումը* | *Չափման միավորը* | *Միավորի գինը* | *II եռամսյակ* | | | |
| | | | | *քանակը* | *գինը* | *քանակը* | *գ...* |
| 1 | Յուղի զտիչ | հատ | 900 | 1 | 900 | 1 | 900 |
| 2 | Օդի զտիչ | հատ | 1800 | 1 | 1800 | 1 | 1800 |
| 3 | Բենզինի զտիչ | հատ | 2000 | 1 | 2000 | 1 | 2000 |
| 4 | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի) | հատ | 3500 | 1 | 3500 | 1 | 3500 |
| 5 | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի ) | հատ | 2900 | 1 | 2900 | 1 | 2900 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ | հատ | 2900 | 1 | 2900 | 1 | 2900 |
| 7 | Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչնիկ) զույգ | հատ | 2900 | 1 | 2900 | 1 | 2900 |
| 8 | Ղեկանիվի սյուներ նտուփեր (ռուլեկոյ տյագա) կոմպ | հատ | 13900 | 1 | 13900 | 1 | 13900 |
| 9 | Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպլեկտ | հատ | 9600 | 1 | 9600 | 1 | 9600 |
| 10 | Տերմոստատ | հատ | 3500 | 1 | 3500 | 1 | 3500 |
| 11 | Բենզանասոս | հատ | 5000 | 1 | 5000 | 1 | 5000 |
| 12 | Մարտկոց | հատ | 27000 | 1 | 27000 | 1 | 27000 |
| 13 | Ջրի պոմպ | հատ | 5000 | 1 | 5000 | 1 | 5000 |
| 14 | Շարժիչի ռեմեն | հատ | 1000 | 1 | 1000 | 1 | 1000 |
| 15 | Ձեռքի արգելակման ճոպան | հատ | 2500 | 1 | 2500 | 1 | 2500 |
| | *Ընդամենը* | | | | 84400 | | 84400 |

*Հավելված N 2*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Անվանումը* | *Չափման միավորը* | *Միավորի գինը* | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ. *բյուջետային միջոցների հաշվին ըստ եռամսյակների* | |
| | | | | Iեռամսյակ | Ընդամենը |
| 1 | Յուղի զտիչ | հատ | 900 | 900 | 900 |
| 2 | Օդի զտիչ | հատ | 1800 | 1800 | 1800 |
| 3 | Բենզինի զտիչ | հատ | 2000 | 2000 | 2000 |
| 4 | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ հետևի) | հատ | 3500 | 3500 | 3500 |
| 5 | Արգելակման սարքեր (թմբուկային արգելակի ճնշիչներ առջևի ) | հատ | 2900 | 2900 | 2900 |
| 6 | Անիվների հավասարակշռման սարքեր (սկավառակային արգելակի ճնշիչներ) կոմպլեկտ | հատ | 2900 | 2900 | 2900 |
| 7 | Անիվների մասեր և պարագաներ (ստուպիցի պաչնիկ) զույգ | հատ | 2900 | 2900 | 2900 |
| 8 | Ղեկանիվի սյուներ ևտուփեր (ռուլևոյ տյագա) կոմպ | հատ | 13900 | 13900 | 13900 |
| 9 | Ղեկանիվի սյուներ և տուփեր(շառավոյ)կոմպլեկտ | հատ | 9600 | 9600 | 9600 |
| 10 | Տերմոստատ | հատ | 3500 | 3500 | 3500 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Բենզանասոս | հատ | 5000 | 5000 | 5000 |
| 12 | Մարտկոց | հատ | 27000 | 27000 | 27000 |
| 13 | Ջրի պոմպ | հատ | 5000 | 5000 | 5000 |
| 14 | Շարժիչի ռեմեն | հատ | 1000 | 1000 | 1000 |
| 15 | Ձեռքի արգելակման ճոպան | հատ | 2500 | 2500 | 2500 |
| | *Ընդամենը* | | | 84400 | 84400 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

| Գնորդ | Մատակարար |
|---|---|
| Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա ՊՓԲԸ | <<Ջոյլ>>ՍՊԸ |
| ք.Վանաձոր, Պ. Սևակի 49 | |
| <<ԱԿԲԱ>> Կրեդիտ Ագրիկոլ բանկ | բանկ Ամերիաբանկ "Վանաձոր" մ/ճ |
| ՀՎՀՀ 06907229 | ՀՎՀՀ 06946725 |
| Հ/Հ 220055140267000 | Հ/Հ 1570017681670100 |
| Տնօրեն Արտակ Եդոյան (ստորագրություն) | Տնօրեն Արտակ Սահրադյանի (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |